

ԶԱՐԵԸ ՈՐՐՈՒՆՈՒ

ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զ. Մ. Որբունու ստեղծագործությունը, որ իր ստեղծման ընթացքի դժվարություններով իսկ բուն սփռումի պատմությունն է վավերացնում, արդյունքը չէր հետևողական ու կանոնավոր աշխատանքի: Իբրև ամբողջական շինություն հղացված «Հայածվածները» վիպաշարի առաջին «Փորձը» (1928) ու վերջին «Ձի քո է կարողություն» (1977) գործերի միջև տասնամյակներով չափվող անջրպետը մի պահ է միայն կեցության բերած խնդիրներով բացատրելի, քանի որ հենց նույն կեցության աղմկարարության հետևում երկարածովող *ստեղծագործական լռությունն էր*, որ ավելի ուշ, 60-ական թվականներին, պայթեց միանգամից՝ ժառանգություն թողնելով ավարտուն և անավարտ (կամ չնշակված) վեց վեպ (վիպաշարի մեջ մտնող ևս հինգ վեպերը և առանձին «Եվ եղև Մարդը»): Ստեղծագործական այսօրինակ լռությունը հետաքրքիր է երկարատև կուտակումների ու ներսում «մեծ գործ» ստեղծելու համար տարածություն բացելու առումով: Իսկ մինչ այդ կյանքի տենդագին ընթացքի ու ստեղծագործական ծախողումների սահմանին լռությունը խզում է այս ամբողջի պատմությունը բերող ու վավերաթղթի արժեք ունեցող գրողի *նամականին*: Նաև՝ օրագրությունը:

Հրատարակություն ենք ներկայացնում Զարեհ Որբունու՝ Պետրոս Զարոյանին ուղղված նամակներից մի քանիսը: Որբունու ու Զարոյանի միջև եղած մտերմությունը, որ միշտ չէր, որ ֆիզիկապես իրար կողքի լինելու բարեբախտությանն էր արժանանում, պահպանվում էր միմյանց հղված՝ օրագրության նմանվող նամակներով: Բավական դժվար էր նամակների ընտրությունն այն իմաստով, որ ցանկացած ընտրության դեպքում խախտվում էր նամականու կառույցը: (Որքան էլ ցանկացած նամականի իր ստեղծման հիմքում չի կրում կանխատեսված կառուցման օրենքներ, խորքում, օգտագործելով ինչ-որ շերտով ինչ-որ մեկին բացվելու հնարավորությունը, տարբերայնորեն մտնում է որոշակի կառույցի մեջ: Առավել ևս՝ մտերմիկ նամականին): Ընտրված նամակները, խախտելով ժամանակագրական հաջորդականությունը, ինչը նամականու կառույցի հիմքերից մեկն է թերևս, հենց խորքի՝ ներքին կուտակումները մի տեղ բացելու հատկանիշն են կրում: Եվ սա բնորոշ է ամբողջ նամականուն: Ուստի, քաղաքերված նամակներն այս դեպքում նամականու այս տեսակը ներկայացնող նմուշներ են ընդամենը:

Նամականին պահպանվում է Երևանի Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ Պետրոս Զարոյանի ֆոնդ, թիվ 50-63: Նամակագրությունը սկսվել է 1924թ. ապրիլի 3-ից և որոշ ընդհատումներով՝ շարունակվել է մինչև 1972թ. հուլիսի 9-ը: Ամենաերկարատև ընդհատումը համաշխարհային պատերազմի տարիներին է՝ 30-ական թվականների վերջերից մինչև 50-ականների սկիզբը: Նամակները հիմնականում գրված են սրճարանների անդորրա-

գրերի, քիչ դեպքերում սովորական թղթերի վրա: Կամ մատիտով գրված մամակներ, որոնք համարյա թե անընթեռնելի են:

Հայտնի է, որ Որբունին դժվար է տիրապետել իր մտքի ընթացքին՝ թղթին թողնելով ոչ միայն հախտումն դուրս հորդած հատվածներ, այլև անավարտ մախաղասություններ: Գրության այս հատկանիշը էլ ավելի զգալի է մամակներում: Բնագիրը պատրաստելիս խուսափել ենք հավելումներից ու սրբագրումներից՝ շատ քիչ դեպքերում միայն դրանք կիրառելով: Տեքստի մեջ կատարած բոլոր միջամտությունները (ինչյունային հավելումներ, մոտավոր ընթերցված բառեր) տրված են փակ փակագծերում: Նույն կերպ նշված են նաև անընթեռնելի բառերը: Մի քանի դեպքերում միայն մեր միջամտությամբ և առանց նշումների նույնաձևության ենք բերել մի քանի բառեր ու կատարել կետադրական հավելումներ: Մնացած բոլոր դեպքերում պահպանել ենք հեղինակային բնագիրը: Ֆրանսերեն թարգմանությունները տրված են ֆրանսերեն հատվածների կողքին, փակագծերում, ծանոթագրությունները՝ մամակների վերջում:

Շնորհակալությունը ուզում ենք նշել, որ ֆրանսերեն հատվածների թարգմանությունը կատարել է պրն. Կլոդ Ադամյանը:

Փարիզ 4 Մայիս 924

Սիրելի Ջարոս,

Նամակդ ստանալուն յուզումը զիս մղեց, յորդուն տրամադրութեամբ մը, գրելու, գրելու, կը հասկանամ^ս, էջեր լեցնել, գրքերու չափ. պատմել, թափել ամեն բան հոգիիդ մէջ այս փոթորկող հոգիէն: Ու երևակայել գրիչին ապերախտութիւնը. ան կը չորցնէ, կը ցամքեցնէ ամեն բան, երբ դպչի մատներուն: Քանիեորդդ անգամն է, չեմ յիշեր, ուզեցի գրել. ո՞հ կեանքի այս անորոշութիւնը, ուր հոգին ոչ մէկ թառ ունի, ծիւղէ ծիւղ, ապառաժէ ապառաժ կը թռչկոտի, օ՞հ, ի՞նչ թռչկոտի, կը տապալտկի: Այդ տապալտուքը ստեղծագործ չէ, մահացնող տառապանքն է անիկա:

Վերստին կարդացի շաբաթ օր նամակդ՝ պատասխանելու համար. տարօրինակը սա եղաւ, որ այդ օրուան ինչպէս անցնիլը չգիտցայ. կարդալու ամբողջ յոյսն այդ օրուան վրայ դրած ըլլալով հանդերձ տող մը չեմ կրցած կարդալ և ոչ ալ գրել: Համակ վազվզուք մը եղաւ. Champs-Elysées ու Palais Royal, Luxembourg- էն [անընթեռնելի], Boulevards-ներէն Etoile և վերջապէս, ինչպէս յիմարացածին վերջակէտը Եծտի Գուլին կամ Շառանթօնն է, իմն ալ Վալրամի պարասրահը եղաւ: Մինչև կէս գիշերը անցած պարեցի, բարեբախտաբար տօնն

էր, խաղաճով պարեցի, և ինչ խաղաճով, avec de la folie (հիքնամոռաց), ոչ մէկ երկրի բան պիտի կրնայ folieին տեղը բռնել. ուրեմն այդպէս եմ պարել: Marie դարձնելէն, կատաղօրէն դարձնելէն աջ թկիս վրայ, կուրծքիս սեղմած, դեռ բազուկներուս մէջ ցաւ կը զգամ:

Պիտի թողում, որ դուն եմթադրես, եզրակացնես, այս կեանքիս իմաստը, իմ կեանքիս: Կ'ըսես, թէ խենթ կեանք մը կ'անցնեմ, ասիկա կեանքիս սովորական մասը չէ, անսովորն է, պատահականը իրեն գերագոյն ուժով, յորդում, պոռթկում մը, Ջարօս, հոգիի ամբողջ ապստամբութիւն մը, բողոք, ինքզինքին դէմ: Պահ մը կ'անոնաւորելու համար [անընթեռնելի] անկեղծ բարեկամութեան մնացի, որմէ միայն Boulogneի անտառին լճին եզերքի և Hôtelի մը լայն հայելաւոր սենեակին գիշերուան մը յիշատակը մնաց լոկ: Փարիզեան ստախօս օդի մը տեղատարափը մեր նորածին մտերմութեան Rendez-vous-ն (Հանդիպում) խախտեցնելով բաժնեց մեզ: Marguerette մնաց ի[ր] villa-ին մէջ և Marrie Buttes Chaumêne-ի շրջակաները: Ես բոլորովին միմակ: Գիրքերու դէգեր. նոր նոր յոյսերով, խանդավառ աշխատութեան մը. օրուան մեծագոյն մասը նուիրած հացի աղքատ կեանքին, մնաց[եալ]ը ականաւորէն Piopirին, Berlitzին որոշ հաճոյքով, զի լեզուները շատ կը սիրեմ: Մնացեալը. ահա "L'Humanitéի կարմիր պառօնները, Le'nine, Marx, Jaurès, Zinoviev և վերջապէս, Weber, Bairac, Charles Gilles economie politique (Քաղաքականութիւն): Ամբողջ լաբիրինթոս մը, որմէ ճնշուած ուղեղս հազիւ կրնայ քչիկ մը քուն մտնալ և ահա երազներ, երազներ, զառանցանքներ, cauchemar-ներ, nightmare-ներ (Մղձավանջ (անգլ.)): Ա'հ, կեանքը... Ջարօս:

Սրճարանի մը անկիւնը Victor Hugoի հրապարակին վրայ. ուր պուլվարներու հեղձամղժիկ ժխորը չկայ. տեսակ մը փրփռում լռութիւն: Կը գրեմ. հանգիստ պուլվարներու, սրճարաններու մտահոգութենէն, այսինքն կիներէն, բայց յանկարծ հոս ալ աչքեր կու գան, կը հանգչին քուկիներուդ մէջ: Կը ժպտինք. գլուխնիս կը ծռենք. երկուքս կը հակինք գիրերնիս շարունակելու: Կա՞յ արդեօք տարբերութիւն մը սա կնոջ և ժխորին մէջ նետուած կնոջ միջև: Կը դիտեմ իրեն, կը ժպտիմ. բայց այդ ժպիտը անհուն մեղամաղծոտութիւն մը ունի. խոկումն է անիկա, կեանքին մտածումը: Ես պիտի երթամ հիմա, երբ լրանամ այս մամակը, ան թերևս - և անշուշտ - ուրիշի մը պիտի ժպտի, գլուխը պիտի ծռէ ու խնդան: Տարբերութիւնը սա է, որ սա կամ ասոնք «ծախու միս» աղտը չեն փակած իրենց վիզէն:

Եւ սակայն, Ջարօս, չեմ կրնար մտքիս մէջ տեղ տալ բնութեան մեծ բանաստեղծութեան այսքան անկումը: Անկո՞ւմ, ի՞նչ ըսի. Աստուած իմ, կարծես տեսակ մը discontinuation (Արգելակում) եկաւ մտածողութիւնս և չեմ կրնար դատել. կը հասկնա՞ս, ուղեղս խանգարուած կը զգամ մտածելէն:

Համրոյրներ առատօրէն
Ջարեհ

Սիրելի Ջարոս,

Այո, ստացայ նամակդ և ճիշդ այն պահում, երբ քեզի նամակ մը ձգած poste-ը պանդոկ կը վերադառնայի: Ստացայ նաև իտալացի տղայէն, Zatanին, որ ամէն ինչ լրացած և այսօր կամ վաղ «sans faute» (Անպայմանորեն) [բաց] տեսնել կ'ուզէ: Մէկդի այս: Միջանկեալ ըսեմ միայն, որ այսօրուան օրականս 10 ֆրանք հազիւ եղաւ, շնորհիւ տուներն 5 fr. fixe (Հաստատուն աշխատավարձ)-ն իբրև extra (Լրացուցիչ աշխատած փող) ունեցածս. իսկ եթէ հաստատուիմ հոս, այդ 5-ը կ'ըլլայ մէկ, այսինքն 30fr. ամսական և non logé (Առանց կացարանի), եթէ հիմա ինձի յաճախորդի սենեակ մը տուած են անոր համար, որ տակաւին իբրև essai (Փորձաշրջան) եմ: Իրենք գոհ են ինձմէ, ես ալ իրենցմէ, մանաւանդ այն ընտանեկանութիւնը զոր ունիմ, բայց ամէն պարագայի շատ հաշիւ չկայ: Թողունք աս:

Նամակիդ այն կետը, որ կը վերաբերի Հատորին՝ վերջին ծայր ուրախացուց զիս. էր երբեմն այս միասին հատոր մը հրատարակելու փափաքը քրքրած կեցած էինք: Ռամկավար բարեկամդ դրամ չափելու մարմաջէն, մենք ալ՝ մեր փափաքէն տարուած կարիէ folie (Անհնարին մի բան) մը ընել. մենք կրնանք նոյնիսկ առաքումին համար օգտակար ըլլալ, բայց վերջապէս պէտք է ծայրը նիւթական ալ ըլլայ: Թէև պատրաստ բան մը չունիմ, բայց կրնամ «Փորձը» կամ «Սև մագերիլ» արտագրել. այդ հետագային: Հիմա կարելիութիւններուն վրայ մտածենք, այս մասին ալ՝ երբ ինձի բացատրութիւններ տաս:

Այս իրիկուն գրեթէ յաճախորդ չունեցայ. 2 հատ միայն, որոնք կանխիկ չճաշելուն սամտիմ չեմ ստացած այսօր, եթէ իրիկունէն այս օրուան անցած pourcentage եմ 11 ֆ. չըլլար:

Ժամը 9-ին դուրսն էի: Սա պէս մը Cours Mirabeau-ն երկարեցի: Մեծ սօսիներուն տակէն և Barbier-ի այդ շարքին առջէն հանդարտ-հանդարտ քալող promeneurs-ները (Ջրոսնող), ծառերուն տիրապետութիւնը մեր վրայ. կարծես տեսակ մը անիրական ծառուղիէ մը կ'անցնիս, մարդիկ շուքերու պէս կը սահին: Վարը, հրապարակին մէջտեղը խոշոր աւագանը իր ցայտուն աղբիւրներով և արծաճներով կը շեշտ այս վիճակը: Անոր աջը Cofé Glasier-ն, ուր Famillia cinema-ն en pleinair (Բացօթյա):

Զես գիտեր, թէ ինչ տխուր բան է միմակութիւնը. կ'անցնիս կուրծքդ ուռած, ծեռքերդ գրպանդ, առանց ուէ մէկուն երեսը մայելու, երբ ոչ ոք կը ճանչնաս և ոչ ոք քեզ կը ճանչնայ: Սիւնիլ բան է մեմութիւնը. սխալ է ուրեմն, երբ Փարիզի բանաստեղծ բարեկամուիս ինձի կը գրէր Etretat եղած միջոցիս. ապրեցէք մենութիւնը, ճաշակեցէք անոր բովանդակ գանձը «La solitude c'est la fécondité» (Մենակութիւնը արգասաբերություն է) կը գրէր: Իսկ ես կ'ըսեմ «La solitude c'est la mort, c'est le mal, c'est le néant si tu veux» (Մենակութիւնը մահ է, չարիք է, չգոյություն, եթէ կուզես): Սինեմային ցածրիկ ցանկապատին շուրջ հայ մայրիկ մը և երկու խեղճ մանուկներու խօսակցութիւնը ականջիս հասաւ. ուզեցի մօտեցնալ. բայց դիմադրեցի փափաքիս. ի՞նչ ըսել. յիմարութիւն: Վերադարձիս հայ

զոյգ մը ծառուղիին տակ. երկու անգամ շեշտակի նայեցայ իրենց: Հասկցան և ետևէս կը նայէին երկար:

Կը մտածէի, թէ ի՞նչ էր, որ ինձի մղեց անոնց, որոնք ինձի համար նոյնքան անծանօթ էին, որքան սա բովանդակ ամբոխը: Թափառական հաւասար բա՞ղդը. չեմ յուսար, քանի որ նոյնքան թափառականներու խառնուրդ մըն է մարդոց սա երանը, որ կը հոսի ժամբաներուն վրայ, որ «կ'ընդհարի» ինչպէս պիտի ըսէր Չուլֆան:² Լեզո՞ւն, ուրեմն: Թերեւս:

Հայրենասիրութիւնը չէր ամեն պարագային, որովհետև երբեք հայրենիքի մը վրայ չեմ մտածած և որուն հիմքերը ինձի համար նոյնն են, որքան ամուսնութիւնը, առևտուրը, և բոլոր բռնազբոսիկ բաները, զորս մարդիկ միշտ են մեր մտքին մէջ և սովորութեան վերածած: Եիշդ այդ պահուն պատին վրայ afficheի մը խոշոր տառերը կարդացի Aux patriots de Provence (Պրովանսի հայրենասերներին), ուղղակի զգուեցայ, զարշեցայ այդ տողը ինձ *chiquei* (Շինծու) մը *absurdités* (Անիմաստութիւն) տուաւ ինձի: Հայերուն համար նորէն կը հասկնամ հայրենասիրութիւնը, որոնք միջավայր կորսնցուցած և զանոնք տիրելու և մէկ լեզուի շուրջ հաւաքած, միևնոյն սովորութիւններու շուրջ հաւաքած ապրելու պէտքը ունին, բայց ատիկա երբեք չեմ ըմբռներ այն ժողովուրդներուն համար, որոնք *chez-soi* են (Բնօրրանում) և որոնց նման բարեկեցութիւնը կը կայանար լոկ և լոկ ընկերային հողի վրայ, *savoir* (Իմա): Դասակարգային:

Այդ մտածումներու վրայ էի, «sur ces entrefaites» (Միևնույն ժամանակ) ֆրանսացի վիպագիրի մը պէս խօսելով, աչքով երեք արագաքայլ աղջիկներու կը հետևէի: Դռնէ մը ներս մտան, ծախ դարձան ու կորսուեցան, յետոյ ուրիշ մը ներս մտաւ: Հետաքրքրութիւնս լարած ներս մտայ. *dancing* մըն էր: Հին շէնքի մը չորս բարձր պատերը շտկած, բազրիկներու ծեղով, պարտէզ մըն էր, քանի մը վայրի շազանակներով և չորս կողմը սողոսկած բաղեղներով: Այդպէս ներս մտնելուդ պատշգամ մը կը բացուի առջև՝ որմէ վար խորունկ պարտէզը: Նուագախումբ դէմը՝ ամպիօնի մը վրայ, որուն վրայ ալ հին արձան մը ցցուած: Ինձի հեքիաթային բան մը թուեցան. երևակայէ միմակ անծանօթ մարդ մը, որ գոհ-ղճգոհի հոգիով կը թափառի, աչքերը երազներու մէջ կորսուած: Երկար կեցայ պատշգամին վրայ կեցած, ոտքի, ուր, երբ ուզեցի պարելու համար աղջիկները հրաւիրել, բոլորն ալ մերժեցին: Յետոյ աչքիս տակէն տեսայ, որ իրարու քիթ կ'ընէին: Քառակուսի դէմք արդեօք վախ տուաւ, թէ արտասովոր արտայայտութիւն մը ունէի, նայած մտքիս իրենց անծանօթ մտածումներուն: Բայց յուսամ, թէ պէտք է թրուած դէմք մը ունենայի:

Պարտէզին շրջանը ըրի ու հեռացայ, թողելով, որ ցուցամուսնուս անոնքը հանգիստ պարեն: Էհ, ըսի, այսօրը դիւրին է, պապան կամ պաշտպան (*tuteur*) անսեզկիտն քսակը կը լեցնեն. վաղը կեանքին մէջ կը բախուինք:

Գիշեր բարի Ջարօս: Հատորի մասին կը գրես ինձի:

Ու հիմա, որ կեզգիշերը հեռու Café Forbin կապոյտ աչքերով ու կլոր դէմքով սպասուիին պառկելու մեկնած ատեն տուած *bonne nuit*-ն (Բարի գիշեր) *dancing*-ի 50 աղջիկներէն աւելի կ'արժէր:

Ջարի

Սիրելի Ջարօս,

Երկտողդ ստացայ: Երէկ իրիկուն երկար նամակ մը գրած էի, տակաւին գրպանս էր նամակատուփ նետելէ առաջ, երկտող մըն ալ ևս կը գրեմ:

Ինչ որ կ'երևի, թէ Luchon-ի գործս փոխուած է թէև անելի լաւ է իբրև տեսակը պաշտօնիս: Այս իրիկուն [կուգամ] և կը տեսնեմ:

Երէկ իրիկուն նամակս գրելէ վերջ Café Terminus գացի St. Paulի տունը կը տօնուէր Paulի միջոցաւ. խմեցինք իր առողջութեանը. լրագրավաճառ Fortը, կի-նը, տղան, patron (Տանտեր)-ին ազնուական կեցուածքով կինը և բարակ, նուրբ աղջիկը, որ գիշեր ցերեկ կը քնանայ, ծանծրախտէ բռնուած դէմք մը, խորունկ աչքերով ու տօգոյն դէմքով:

Մինչ այս տողերս կը գրեմ, լեհուհին անուշ ծայրնով մը կ'երգէ, շատ անուշ, ծայր մը, որ կրնար շատ բան խոստանալ, [անընթեռնելի] պէս յստակ և հնչուն:

Խոհանոցի մէջ այդ երգերը, ինծի իրապէս- որովհետև ամեն անգամ է գրեթէ-գուշակել կուտան անոր սրտին դողը: Յիշէ, թէ Մելանոշը³ ինչ չափազանցութեամբ կ'երգէր Villa Charlot իջած միջոցնիս: Բան մը, որ ինծի կռահել տուած էր ամեն բան:

Կը ձգեմ գրիչը, քիչ մը հանդարտ մտիկ ընելու այդ երգը, որ ահա կրկին վերսկսաւ, պահ մը ներս գալէ, ինքզինքը ցաւցնելէ վերջ:

Համբոյրներով Ջարեհ

Նիս 13/ II / 28

Սիրելի Ջարօս,

Նամակդ կրկին կը կարդամ ու ներողութիւն խնդրելու վրայ էի պատասխա-նին ուշացումին համար, երբ տեսայ, որ 5 օրուան տարբերութիւն կայ միայն: Էհ, շատ չէ եղեր, նամակդ առած օրս իսկ թուղթ գրիչ հանեցի, նոյնիսկ պահարա-նին վրայ հասցէն գրեցի, դրոշմը փակցուցի, յանկարծ տրամադրութիւնս պղտո-րեցաւ, անելի ճիշտը, irrité (Տհաճութիւն) եղաւ (ի՛նչ է հայերենը) ամեն բան ձգե-ցի լրագրի մը յիմար լուրերը ծամծմելու համար:

Կ'ըսես, թէ դերերու յեղաշրջում մը եղած է, հաւատա՛, տղաս, որ «ճերմակ նեգրի» մը չափ կ'աշխատիմ, առտուան 8-էն մինչև գիշերուան ժամը 10-ը: Ան-դադրում վազք, խոհանոցէն ճաշարան, ճաշարանէն խոհանոց: Երբեմն կը մտա-ծեմ՝ եթէ այս միայն վազքը ի գործ դրուած ըլլար ճամբորդութեան մը համար, մէկ օրուան մէջ Իտալիան ճեղքած Յունաստան անցած կ'ըլլայի: Աւաղ, որ նոյ-նիսկ չոր հացի դրամ չունիմք գրպաննիս այդպէս ընելու համար, փոխանակ ստոր Բադրոնի մը համար վազվզելու մինչև իրիկուն:

Նամակդ ուզածիս պէս երկար էր, օ՛խ, ինչ յափշտակութեամբ կարդացի, մարդ եղի՜ր, այդպէս երկար, անհատնում նամակներ գրէ:

Մեհեանհիմ՝ նամակը ընդօրինակելու համբերութեանդ կը սքանչանամ, երբ կարճ պատմութեամբ մաքուրը քաշելու ծանօթոյթը կ'ունենանք: Նամակը համարտու և կազմուած, հարուստ լեզուով գրուած է: Կը մտածեմ, թէ ինչպէ՞ս տիրացած էք դուք այդ լեզուին, երբ ես անճոռնի լեզու մը ունիմ, արդեօք լեզուն կեանքին հետ ունէ յարաբերութիւն ունի՞: Իմ կեանքս գիտես, Մանշէն Սօն-Պլան, Փարիզէն-Մարսէյ, Բերիմեաններէն-Ռիվիեռա: Անկանոն ընթերցում, զգացումներուն, գիրի, անկարող զանոնք տիրել ու շարահարելու [անընթեռնելի], իրաւունք ունի Մեհեանը, պիտի մնան յաւիտեանական սկզբնական մը: Նիւթերը, հրաշալի ու ինքնատիպ, (ասոնցմով հպարտ եմ գոնէ) միշտ պիտի յորդին իմ մէջ, մտքիս մէջ պիտի կազմուին, պիտի բեղմնաւորին և առանց գրուելու, կամ տեսական արտայայտութեան կաղապարը հագնելու պիտի ցնդին: Արդեօք վիժուկի՞ն, թէ՞ ճշմարիտ բանաստեղծին (որ արհամարհանքը արտադրութեան) յատուկ պարագայ մըն է այս: Եւ յետոյ կապերս այնքան խզած եմ մտաւորական աշխարհէն, քիչ մըն ալ քեզի չգրելուս պատճառներէն մէկն ալ այս էր, զարթեցնելու համար արտադրելու և կամ գրական աշխատանքներու բնագոյը: Երաժշտութեան, նկարչութեան փափաքներս լալով ([անընթեռնելի] լացով) թափփեցի, չպիտի կրնա՞մ մաս թօթափել այս: Հաւատա՛, այդ օրը իմ երջանկութեանս հիմնաքարը դրուած կ'ըլլայ, հետզհետէ վարժուելով, մոռնալով ստեղծագործութեան մեր փառասիրութիւնը:

Երկու երեք օր է սկսայ ստանալ «Երևան»: Եսայեանը հայաստանեան գրական հանդէսներու մէկ compte rendu (Ակնարկաշար) կուտայ: Հաւատա՛, մեր փառասիրութիւնը և մեր անձնական անշահախնդիր ու շահախնդիր հաճոյքը միայն հոն է, որ կրնանք վայելել: Կանոնաւոր, առօրեայ, տեսական, յարատեւող աշխատանք կը տարուի: Հրատարակութիւնները մէկը միւսին կը հետևին: Մենք, արտասահմանի մէջ շատ շատ չմեռնելու ճիգեր կրնանք ընել ու, ո՞վ գիտէ, մահամերձի՞ ճիգեր... Մանաւանդ երբ արտասահմանը մերկայացնող գրողները չկրցան նոյնիսկ իրենց նոր միջավայրէն ամենաչնչին դրուագ մ'անգամ տալ: Առնուազն պէտք է, որ շոշափելի ու կանոնաւոր յարաբերութիւններ պէտք է մշակել երկրին հետ, մտքի ու գաղափարի շփում պէտք է:

Է՛հ. թողունք նորէն գրականութիւն, միշտ գրականութիւնով կը վերջանայ մեր նամակները, մեր խօսակցութիւնները, ուր որ ալ դառնան անոնք, ըլլայ սրճարանի մը անկիւնը, ըլլայ փողոցը, ըլլայ նոյնիսկ բոզանոցին մէջ, երբ կիները մեր ծունկերուն վրայ կեղծ ժպիտներ կը շռայլեն ու իրենց հալումներով մեր միտը կ'արթնցնեն: Փտած մարդեր ենք... կեանքէն դուրս, երբեք կեանքին հետ ու անոր մէջ չենք ապրիր: Համդիսատեսներ, որոնք վարագոյրին բացուելուն կը սպասեն, վարագոյրը կը բացուի, կը դիտենք, վարագոյրը կը փակուի ու կը մեկնինք: Ինչո՞ւ, որովհետեւ միշտ բան մը վերցնել ու գրուածքի մը մէջ մտցնելու տենչանքը կայ մեր մէջ, իմ, քու ու անոր և բոլորին համար է ըսածս, ով որ կը ժխտէ թող առանց ամչնալու մատ վերցնէ: J'en ai esse de ça (Համարացած եմ դրանից), հասկցար. ապրիլ ուզելու համար պէտք է մոռնալ այս ամէնը ու ապրիլ ապրելու համար:

Կը ներես, նորէն նոյն նիւթին կու գամ: «Երևան» երկու թիւ ի վեր Կաքաւեանէն վէպ մը հրատարակել սկսած է, կարդայ: Այդ տղուն պատմելու ձևը, ոճը սիրած եմ, Դիւսիսային վէպերը կը յիշեցնեն ինձի, անոնց աչքերը փակել ու երագել տուող յատկութիւնը ունին: Ռուսական է կարծեմ այդ ազդեցութիւնը: Ամէն պարագայի Կաքաւը շինուած է ու ամէնուն համար հաճելի կրնայ ըլլայ իր որոշ թերութիւններովն իսկ:

Փարիզ հրատարակուելիք «Յուլք»էն՝ երկրորդ նամակ մը ստացայ՝ պատասխանելով իմ քանի մը հարցերուս:

Կաքաւին, Դեղձմանիկին, Փանոսին և Մազմանեանին՝ խմբագրական կազմով: Բոլորն ալ նորեր են: Կ'ըսեն, թէ զուտ գրականութեամբ զբաղող ու քաղաքականութեամբ չզբաղողները և մանաւանդ երիտասարդները պիտի մասնակցին: Դայաստանէն կանոնաւոր աշխատակցութիւն և վճարումը հետզհետէ պիտի գնահատուի ըստ թերթին ծաւալման դիրքին: Ա թիւը մարտին լոյս կը տեսնէ. աշխատէ Բ թիւին բան մը հասցնել, ինձի դրկէ, ես իմիցիս հետ կը դրկեմ:

Չեմ գիտեր ուրիշ ինչ գրեմ: Շատ տափակ ու միօրինակ կեանք մը ունիմ: Երկ իրիկուն միայն իջայ քաղաք Carnavali խուլանքին մէջ նետուելու համար: Capponi-ին հետ էի. միշտ միասին ենք արդէն. 20-25 ֆրանքի confetti (Կոնֆետի, զանազան գույնի մանր թղթիկներ՝ պարահանդեսում իրար վրա շաղ տալու համար) դրամ ծախսեր եմ առանց աղջիկ մը համբուրել համարձակելու, բայց խենթ «կռիւներու» բռնուեցայ, մանր թղթիկները ծրարներով իրար վրայ յարձակելով աղջկան մը հետ, որ առաջին անգամ յաղթուեցաւ ու երկրորդին յաղթեց զիս: Յաղթեց, վճարեցինք, որպէսզի խօսակցութիւնը սկսի: Շատ correct խօսակցութիւն մը, ուրիշ չէր կարելի, քանի որ bonai (Սովորական) վարդ մը չէր: Ծնողքը կար, միասին խօսակցելով բաւական բարձրացանք avenue de la Victorie-ը, լոյսերու ու ռատիօներու ժայթքած երգերու յորդ առատութեան մէջ գինովցած: Ուրբերմիս confetti-ներու դեզաչափ տեղատարափին մէջ:

Ուսմական հաճոյք: Folie, folie vulgaire, meis, qui venis tu? C'est la vie, elle est vulgaire et splendide en même temps (Վուլգար խենթություն, բայց ինչ անենք: Այդպես է՝ վուլգար և հրաշալի միաժամանակ):

Այսքան: Դամբոյրներ, բարևներ ամէնուն, ամէնուն:

Զարեհ

Խնդրեմ Դրաշին՝ եթէ տեսնաս, ըսէ, կամ ըսել տուր, թէ ինչու՞ երկու բացիկներուս չէ պատասխանած:

Ինձի համար շատ հետաքրքրական է Սարգիսին¹⁰ հետ ունեցած խօսակցութիւնը: Ամմիջապէս գրէ ձեր մասին և քու վրադ թողած ընդի, տպաւորութեան:

Զարեհ

Սիրելի Ջարոս,

Ահա վերջապէս նամակդ, և ամենէն աւելի սպասուած նամակդ:

Դուն ալ զգացիր վերջապէս, որ պէտք է գործի գալ, հրապարակ նետուիլ ջա-
նալով պատռել բոլոր դիմակները, որոնց աղմուկը նեղցուցիչ մթնոլորտ մը շի-
նած է մեր դիրաւ[թ]եք ու անկազմ երիտասարդ սերունդին մէջ, որը արդէն իր հո-
գեքանութեան անհամապատասխան մթնոլորտէն ճնշուած ու շլնորած է: Ու ա-
հա, փոխանակ անոր կենդանի, աւելի ճիշդը կենդանարար շիճուկ ներմղելու,
վարդապետի ծթած հոգի մը կը սնուցանեն:

Պէ՛տք է, որ այս դրութիւնը շարունակէ: Մինչև հիմա կ'ըսէի, հերն անիծեմ,
թող քանդիչները շարունակեն իրենց չար գործը, բայց ես պիտի գիտնամ ինք-
զինքս բռնել, ինքզինքս մնալու համար: Բայց հիմա կը տեսնեմ, որ խնդիրը ինձ
հետ ուրիշներ ալ ազատելուն մէջն է: Պիտի կրնա՞նք այդ տեսակ պատասխա-
նատու, *ambitieux* (Հարգալից) ծեռնարկ մը կատարել, յաւակնութիւնը չբաւեր, և
ես յաւակնութենէ դուրս է, որ կը զգամ, թէ գոնէ *pédantisme* (վերամբարծ) գուրկ
և տէր գոնէ որոշ չափով *énergie*ի աւելցած քու մանաւանդ *energie*իդ և լոջու-
թեամբ, հաւատքիդ *impetuosité* (Ուժգնություն) պիտի կարենամք գոյն ու կեանք
տալ ամսագրի մը, որ ոչ թէ անձնական բաղձանքներու ծնունդն է, այլ մեր մի-
ջավայրին մեր վրայ դրած անվրիպելի պարտադրութիւնն է, մենք երկուքս ուղ-
ղակի այդ պարտադրութեան գործադիրներն ենք:

Եւ, նաև, ես այն հաւատքին եմ, որ ուէ թերթ, ամսագիր հակամէտ է միջավայր
մը ստեղծելու, ակնարկ մը նետէ մեր կամ օտար իրականութեան վրայ, ուր պի-
տի տեսնես իւրաքանչիւր օրկանի շուրջ տարբեր և որոշ շունչ մը, որոնք ըլլա-
լով հաւաքական ուժ, մէկը միւսին յաղթելով կը մեծնայ ու կը դառնայ բացար-
ձակ մօճարք: Մենք կը բաւականա[նա]յնք գոնէ ազատ խորհողներու, հետևա-
բար ողջամիտներու, *bon sens*ի (Ողջախոհ) և *sens artistique*ի (Գեղագիտական
ճաշակ) պզտիկ, բայց յստակ ու շեշտուած կորիզ մը ցանա՞ծ ըլլալով:

Ասիկա անշուշտ երիտասարդ տարրերու մէջ. հիմներու հետ գործ չունիք, ա-
նոնք կազմած են իրենց հայեցակէտները, որոնց ամփոփոխելի համոզումը ու-
նին և մէկ ոտքը գերեզմանին մէջ՝ չեն անգամ ակնարկ մը նետած քանի մը քա-
ջազներու յանդգնութեան: Մեզի կը մնայ ամոնց երկրորդ ոտքն ալ գերեզման
դնելու պահուն իրենց շէնքն ալ հողին շերտերուն յանձնել ու աչքերնին ետև
ծգել: *Barrés*¹⁰ իր ձգտումնաւոր (բոլորը) գրուածքները բոլորը երիտասարդնե-
րուն նուիրած է, զանոնք կախարդած ու այսօր իր շունչին *intensité*ով (Ուժով)
հայրենասէրներու տխեղծ ու տափակ միջավայր մը շինած է. ան ճարպիկ եղաւ
անով, որ գիտցաւ երիտասարդութեան դիմել:

Կուսակցություններու հանդէպ մեր դիրքը բացարձակ անկախ, ոչ մէկ նախընտրութիւն, ոչ մէկ վարանում գեղեցիկ գործերու գնահատութեան մէջ, որ կուսակցութեան մէջ ալ որ ըլլայ:

Գալով ամենակարևոր խնդրին՝ ապահովել մեր նիւթական վիճակը, որ 6000ի մէջ կը պարփակես, 4 թիւ, այսինքն իւրաքանչիւր թիւը 1500 ֆրանք. քանի՞ օրինակ...

Առաջին տարուան կամ նոյնիսկ երկրորդ տարուան համար համաձայն են, որ եռամսեայ պարբերական ըլլայ, աւելի հաստատ և վստահ քալելու համար, ոչ միայն նիւթական ընթացքին համար, այլև պարունակութեան համար ժամանակ պէտք է մեր ընտրութիւններուն մէջ:

Քանի որ դուն յամծն կ'առնես 3000 ու միւս կէտը իմ վրայ է, այդ մեծ հաճոյքը իմ վրայ կրնամ առնել այս ծնեռ, երբ Նիւսի կամ Մարսելի մէջ demi-chefի (փոխտնօրէն) գործ մը գտնամ, ամսական 800-1000 ֆրանք վաստկելով, իսկ հետագային անշուշտ վաստակս կ'աւելնայ, երբ chef, այսինքն կառնոն ըլլայ, գալ ամրան: Նիւթական ուրեմն որոշ չափով ապահով է, աշման, երբ Մարսելյ գամ, կը ջանամ պարտքով դրամ գտնել ու վերջնականապէս ապահովել այդ կողմը, իսկ գալով բովանդակութեան որակին հաւատա՛, որ ուէ մէկէն աւելի լաւ կրնամք տալ, նկատի առնել մեր շուրջը տիրող տափակութիւնը: Եւրոպական և ռուսական առոււծով ներոյժ և լեցուն շունչն անգամ արդէն մեզի համար մեծ բան մըն է¹²:

Սինեմայի rubrique (Փոքրիկ սյունակ) մը բանանք, ոչ մէկ հայ լրագիր կամ ամսագիր անկարող է այդ բանը ընելու, որովհետև շատ քիչեր են, որ գիտեն ամոր ինչ essence (հոյրք) ունենալը:

Այս առթիւ ըսեմ, որ Cinéma-Cinéի տնօրէն Jean Tedesco, որ ֆրանսական լաւագոյն cinegraphisteներէն մէկն է Gance-ի, Epsteinի, Dulac-ի, René Clair-ի և այլն հետ հիմնած է, [անընթեռնելի] արգելման օրէնքէն բոլորած, ընկերութիւն մը, որ աշխարհի բոլոր անկիւններուն մէջ գեղեցիկ ժապատէնները ներածել և արտածել privé (Մասնավոր) ներկայացումներու համար, որոնք ընկերացած պիտի ըլլան conferenceներով: Բացառիկ բան մըն է այս: Ես իբրև ամենէն առաջին արծանագրողներէն մէկը, fiche մը ստացայ մամակով մը, որ կը խնդրէ, նկատի ունենալով այն հետաքրքրութիւնը դէպի ֆիլմը, նոր թեկնածուներ գտնել ընդարձակելու համար ընկերութիւնը, որ միջազգային է: Անունդ կը դրկեմ, և բացատրութիւնը կը ստանաս:

Pâtisserieը (Դրուշակեղենի խանութ) կը գոցեն. ժամը առտուան մէկն է: Այսքան:

Համըրյոներ
Զարեհ

Սիրելի Ջարոս,

Եթե ֆրեոտեան լեզուով խօսիմք, հետևեալ ծնով պիտի սահմանեն մամակեղ քաղած տպաւորութիւնը, դուք moi-ն էք, իսկ ես soi-ն (ես (բանականութիւն), Լա (զգացմունք)՝ ըստ Ֆրոյդի): Այսքանը կարծեմ հասկնալի է. այս էական refoulement (Արգելաւում, կասեցում) է, որ իմ մէջ վրէժխնդրութեան symptome (Ախտանիշ) յայտնէ: Մինչդեռ դուք արտաքինի հետ ձեր յարաբերութիւններու մէջ պատշաճութիւններուն խողովակով կը դատաստանք: «Պէտք չէ կամուրջին տակ սէր ընել», «անկարելի է անքնական է մօրը մեռած ատեն բոգերու հետ երթալ», «գայթակղեցուցիչ է մամակը»: Ի՞նչ կը կարծեք բարեկամ, կ'ուզեք անպայման գեղեցկացնել կեանքը, գեղեցիկը ձեր ըմբռնումով ասուած հոս անշուշտ: Թող խօսին ինչ որ կ'ուզեն, իմ պարտականութիւնս գրել է, իսկ անոնցը կարդալ ու սիրել կամ գայթակղիլ (իսկ ես երկրորդ պարագան պիտի մախրմտորէի), գայթակղեցնել ըսել է կեղծիքի ճահիճին մէջ քար մը նետել: Ես մերժող մըն եմ տրուած մտայնութիւնը, բարոյականը: «Փորձին» մէջ քօղարկուած ծնով տուի չհասկցան, իսկ հիմա որ բացէ ի բաց կը գրեն վիժած կ'ըլլան: Ինչո՞ւ ուրեմն չհասկցան, թէ կամուրջին տակի սէրը (Փորձ), սէրը caricature (Ծաղրանկար) վերածել [մը], որ կու գար ինքնին սիրոյ ողբերգական ըմբռնումին հակասութեան յառաջադրութեամբ: Մօրը պարագան ընտանիքին տրուած հարուած էր, բոլոր ընտանիքին վերաբերեալ սրբագործած զգայութիւններուն քանդումը, բնականը անբնականին դէմ. բնութիւնը քրիստոնէութեան աւերներուն դէմ. այս տեսակետով Բ գիրքս ծախողում մըն է ձեզի համար¹³:

Զգենք այս: Ահաւասիկ դուն Փարիզ, Ste Beuveի¹⁴ գահը նստած, կամ աւելի ճիշդը Taineը, որ Ste Beuveի ([անընթեռնելի]) գահին վրայ դրած է ոտքը: Զեպապճեան, Բալուեան, Չոպանեան, տղաքը, Ապագայ, Զուարթնոց¹⁵, ինչ զլխապտոյտ, է մոռնալ երկու տող գրել իր Ջարեհին, որ դիրքին չվիժեր, մի վախճաք, պաշտպանողականիդ մէջ այսպէս ըսէ, որ ես ինքս արուեստի հոր մըն եմ, դոյրը կը նետես, անպայման չկոխուած հող, չխմուած ջուր դուրս կ'ելլէ:

Իմ կեանքս բոլորովին մենաւոր է, եթէ չհաշուենք Լիւսին¹⁶: Ամբողջ մտահոգութիւնս տուն տուի վրայ շարել շաբթ շաբթ 150 ֆրանք տուն դրկելն է. Մեկանոյշը յանդիմանական մամակ մը գրած է, որ կ'ըսէ, թէ շատ քիչ կը դրկեմ, 200 պէտք է: Երանի թէ կարենայի 300, բայց չես կրնար երևակայել ինչպէս կը կոռւիմ սուերուն հետ, ուրկէ acariatre (Զգվելի) դիմադրութիւններ: Փարիզ գալու ծրագիրս սեպտեմբերին վերջ (ան ալ որովհետև դուն հող ես, Չուլֆան ու Ժանը կան) ջուրը իյնալու վրայ է, չեմ կրնար խնայողութիւն ընել, ոչ միայն հող ապրելու, այլ ճամբու ծախս ու ձերոնց տուն դրկուելիք դրամին համար, այդ շաբթուայ ընթացքին: Ինչ որ է, մինչև սեպտեմբերի վերջը ատեն կայ: Կարօտով, և բարևներ Արշամին,¹⁷ Բալույեանին: Կրնաս երթալ կրկին Ժանին: Դոգ չէ:

Ջարեհ

ԾԱՆՈԹԱՎԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հավանաբար խոսքը «Այգեկուք» ժողովածուի մասին է: Որքան հայտնի է, այն չի հրատարակվել:

2) Խաչիկ Չուլֆայան, գրող:

3) Որբունու քույրն է: 1928թ. ամուսնանում է Ջարոյանի հետ:

4) Կարո Մեհյան, գրող, դաշնակցական գործիչ:

5) Տպագրվել է «Երևան» թերթի 1928թ. մարտի 8-ից մայիսի 9-ի համարներում: Ակնարկաշարը տպագրվել է ընդհատումներով:

6) Նկատի ունի Վահրամ Կաթավյանի «Լինա» վեպը, որը թերթնով հրատարակվել է «Երևան»ում, 1928թ. փետրվարի 9-ից մայիսի 30-ի համարներում:

7) «Ցուք» պարբերականը հրատարակվել է 1928թ., ընդամենը չորս համար: Գլխավոր խմբագիրը եղել է Եղիա Չուբարը: Պարբերականն ուներ համայնավարական կողմնորոշում: Նպատակը սփյուռքի երիտասարդ մտավորականներին իր շուրջ համախմբելն էր:

8) Կաթավը Վահրամ Կաթավյանն է:

Չկարողացանք ճշտել, թե ով է ներկայացել Դեղծանիկ կեղծանվամբ:

Փանոսը հավանաբար գրող Փանոս Փանոսյանն է:

Մազմանյանը բանաստեղծ Վրույր Մազմանյանն է:

9) Հավանաբար նկատի ունի Հրաչ Ջարդարյանին:

10) Գուցե նկատի ունի գրող Սարգիս Քեչյանին (Ջանգու):

11) Սորիս Պարբես (1862-1923թթ.), ֆրանսիացի գրող:

12) Չկարողացանք ճշտել, թե ինչ թերթ են ցանկացել հրատարակել և հրատարակել են արդյոք որևէ համար: 1924թ. Որբունին և Ջարոյանը հրատարակում են «Նոր հավատք» ամսաթերթը, որը կարճ կյանք է ունենում: 1928թ. հուլիսին գրված այլ մամուլներում, երբ ծրագրում են հրատարակել թերթը, հիշատակվում է նաև «Նոր հավատք»-ի ծրագրի ծախողման մասին: Չենք կարծում, որ մի քանի տարի անց ցանկացել են շարունակել հին ծրագիրը:

13) խոսքը «Գոհարիկը» գործի մասին է:

14) Շառլ Օգյուստեն Սենտ-Բյուվ (1804-1869թթ.), ֆրանսիացի քննադատ և գրող: Ակնարկը վերաբերում է Ջարոյանի իր նկատմամբ ունեցած վերաբերմունքին:

15) Հրանտ Բալույանը «Ջվարթնոց» պարբերականի (1929-64թթ.) խմբագիրն է: Հանդեսը հրատարակվել է ընդմիջումներով՝ 1929-31թթ., 1937-39թթ., 1944թ., 1947-48թթ., 1955-64թթ.: 1937-44թթ. եղել է տարեգիրք:

Նկարիչ Մելքոն Քեպապճյանը ձևավորել է «Ջվարթնոց» պարբերականը:

«Ապագա» օրաթերթը հրատարակվել է Փարիզում 1921-50թթ.: Եղել է Ռամկավար ազատական կուսակցության օրգանը: Խմբագրակազմում ընդգրկված են եղել Հովհաննես Պողոսյանը, Վաղարշ Թազվորյանը, Հովսեփ Գույումջյանը և այլք:

16) Ֆրանսուզի, որի հետ ամուսնանում է հետագայում:

17) Հավանաբար նկատի ունի բանաստեղծ Արշամ Տատրյանին:

Հրատարակության պատրաստեց՝

Սիրանուշ Դվլյանը

Ակսել Բակունցի հրատարակվող «Ձանգեզուրը» նրա նույնանուն կինոբեմագրի ռուսերեն և վերջին տարբերակն է: Այն հեղինակը գրել է Մոսկվայում, ուր գործուղվել էր հատկապես դրա համար՝ նկատի ունենալով կինոգործի մասնագետների առկայությունը: Տպագրվում է առաջին անգամ՝ Հայաստանի ազգային արխիվում պահվող մեքենագիր օրինակի հիման վրա (ֆոնդ 113, ցուցակ 4, գործ 10051, թերթեր 6-50):

Սույն հրատարակությանը կից ներկայացնում ենք նաև Անաստաս Միկոյանի նամակը (տե՛ս նույն արխիվը. մ. 27, ց. 3, գ. 55, թ. 3, մեքենագիր պատճեն), որով վերջինս հայտնում է Ստալինի կարծիքը «Պեպո» կինոնկարի և հեղափոխական բովանդակությամբ կինոնկար ստեղծելու անհրաժեշտության մասին: Նամակի լայն քննարկման արդյունք է դարձել Ակսել Բակունցի «Ձանգեզուրը»:

Բնագիրը պատրաստել է հրապարակման պատմական գիտությունների դոկտոր Վլադիմիր Ղազարխեցյանը: Սանրամասները տե՛ս նրա հոդվածում՝ «Ակսել Բակունցը և կինոն», Գրական թերթ, 1999, թիվ 12:

Тов. Ханджян

Дорогой Агаси.

Товарищи Дзунуи и Бек-Назаров, будучи в Москве накануне выхода кинокартины "Пэпо", очень хотели, чтобы тов. Сталин посмотрел эту картину и дал бы свой отзыв.

Тов. Сталин эту картину посмотрел после того, как тов. тов. Дзунуи и Бек-Назаров уехали из Москвы. Поэтому я не мог передать им мнение тов. Сталина и пишу Вам об этом. Пишу еще Вам, главным образом потому, что оценка, данная тов. Сталиным этой картине, имеет исключительное значение для судеб развития киноискусства в Армении и не только киноискусства. Тов. Сталин сказал, что картина "Пэпо" показывает, что в Армении подобраны кадры замечательных артистов. Быт и типы старого Тифлиса переданы прекрасно. Однако, несмотря на это, картина "Пэпо" не может иметь большого успеха. Ее не поймут в России, а молодежь Армении и Тифлиса, которая будет смотреть возможно с интересом, не получит от картины ничего идейно ее поднимающего, ибо в картине не затронут ни один актуальный вопрос.

Имея такой кадр прекрасных артистов, высокую технику, - почему бы не дать картину с развертыванием основных проблем жизни армянского народа? Почему бы не разработать тему о дашнаках и борьбе с ними? Например, тему о том, как дашнаки бросились в объятия Антанты, как это чуть не привело к гибели и как армянские народные массы пошли к Советской власти, а Советская власть пришла в Армению и теперь Армения расцветает — показать стройки, колхозы, молодежь — комсомольцев и комсомолок.

Правда, все это острые темы, но зачем их избегать? Чем объяснить, что армянские киноработники избегают этих острых тем?

Тов. Сталин высказал мысль, что эти актеры с такой техникой, если бы взялись за тему показа Армении, не боясь острых проблем, могли бы дать прекрасную и по технике и по содержанию картину.

Надеюсь, что эта замечательная оценка и критика картины "Пэпо" и указания тов. Сталина в каком направлении должно развиваться армянское киноискусство и какую картину в ближайшее время должно дать, послужит поворотным моментом в развитии армянского киноискусства.

С приветом А. Микоян

З А Н Г Е З У Р

Авторский сценарий

АКСЕЛ БАКУНЦ

Предрассветная тишина.

Тучи медленно поднимаются из ущелья.

Пейзаж Зангезура: из глубокого ущелья вверх, по высоким скалам, на вершине которых расположилось село "Медовая скала". В скале раскрывается дверца. Ата-апер^{*} выходит из дома и приставив ладонь ко лбу, смотрит на солнце, смотрит вниз. Еще нет солнца. В ущелье густые тени.

Ата-апер спускается по ступенькам, высеченным в скале, спускается медленно, и кажется, что вместе с его ногами ступеньки поют далеко, очень далеко...

Сельская кузня.

Перед кузней — Ата-апер и двое крестьян.

Кузнец — Макич. Он чинит плуг Ата-апера, и в этой работе ему помогает сын Ата-апера, Левон, юноша в солдатской форме.

Кузнец и работает и беседует.

- Где не ступит Красная армия - там мир между народами ... я сам это видел.

Ата-апер спрашивает:

^{*}Апер — дядя, отец, geg.